

Սոյն յայտարարութենէ յետոյ, Գեր. Նախագահ Ս. Հայրն յոտին կանգնեալ, ինչպէս նաև բոլոր հանդիսականք, հոգեհանգստեան աղօթք մը կարդաց և օրհնեց զյիշատակն կտակարար բարերարին, ձայնակցութեամբ ներկայից։  
(«Արևելք»):

# ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԲԵՒԵՌԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ:

Սքսփորդի հռչակաւոր ուսուցչապետ Սէյսը (Sayce) պ. կոնի-բերի միջոցով հաղորդում է մեզ՝ հանդերձ շնորհակալութեամբ՝ մեր նոր գտած բևեռագրի վերծանութիւնը, որն հաղորդում ենք իմբագրութեանդ ի հրատարակութիւն: Ուսուցչապետ Սէյսը այս բևեռագիր արձանագրութեանը տալիս է շատ մեծ նշանակութիւն (inscription d'un importance Considérable): Առանց մանրամասնութիւնների, առանց նշանակելու գաղափարագրական և այլ քերականական նշանները (Préfixe déterminative, affixe déterminative), որոնք բաղմամբիւ են բնագրում, դնում ենք այստեղ տող առ տող բնագրի վերծանութիւնը և թարգմանութիւնը, այնպէս ինչպէս կարդում և թարգմանում է պ. Սէյսը: Արաբական թուանշանների արձանագրութեան տողերն են ցոյց տալիս: Բնագրի ընթերցուածը ընթերցողների գիւրսութեան և հետաքրքրութեան համար դնում ենք հայերէն տառերով: Բառերի վանկերը համաձայն Սէյսի ընթերցուածի բաժանում ենք գծիկներով: Խրաքանդիւր տողի և բառի տակ՝ իւր թարգմանութիւն:

1. Բաւ—գի—նի—նի ————— ար—սու—ու—ի—սի—նի  
Բաւ—գի—նի—նի ————— հոգի
2. Ար—գիս—տի—ս ————— Սէ—նու—ա—քի—նի—ս  
Ար—գի—նի—նի ————— Սէ—նու—ա—քի—նի:

3. ւ—լի—է      դհոլլուրի      բա—դու—ու—սի—ի—է  
 4. Սի—ի—դի—իս—նի—բի      տե—րու—ու—բի  
 Էս զեբալանգեցի      Էս շինեցի:  
 5. Ար—գի—իս—լի—բի—նի—լի      տի—ի—նի  
 Արգիսիսի (պալատ)      նա առնաւնա՛հ է  
 6. գի—ու—րա—ա—նի      քու—ուլ—դի—նի      մա—ա—նու  
 ?      ?      Ռէլլ Ռիսլ  
 7. ու—ի—      գի—ի      իս—լի—նի      սի—դու—ու—բի  
 Է      պալատ      արա      զեբալանգեցի Էս մալ  
 8. ա—գի—ի—լա—ա—նի      սա—նու—է      ա—գու—բի  
 արալանի ( ? )      Էս պալատի—      Էս առնալ  
 9. ուլ—դի—է      զա—ա—րա—է      տե—րու—բի  
 արանի      արանի      Էս շինեցի:  
 10. զա—դու—բի      ար—նի—սի—նի—լի      իս—լի—նի  
 Էս ինգեցի      արանի      արա արան  
 11. Ար—գի—իս—լի—նի      Մէ—նու—ա—բի  
 արա պալատն է Արգիսիսի      Մէնալ արան  
 12. Խուտէ      զան—նու      Խուտէ      ալ—սու—ու—ի—նի—է  
 Խաթալ      Էս      Խաթալ      Էրց  
 13. Խուտէ      ըի—ի—ա—ի—նա—ա—ու—է  
 Խաթալ      Էս (վանայ)      Էրց  
 14. ա—լու—սի      Դհու—ուս—պա—ա—է—իսանի  
 ար Էս      Տապալատն:



Այսպէս ուրեմն՝ Թարգմանութիւնը առանձին վերցրած դուրս է գալիս մօտաւորապէս հետեւեալը. « Քաղաքի աստուածային « որդիներին (կամ՝ գիւցաղիւններին) Հզօր Արգիստիսը, Մենուա- « սի որդին, ասում է. այս պալատը որ կործանուած էր ես վե- « րականգնեցի և շինեցի: Այս Արգիստիսի որդու պալատն է, « որն անուանում է . . . Սրա պատի վերաշինութեան համար « գործ դրի բաղմամբիւ աղիւսներ: Ես առի սիւներ և դռներ « և շինեցի ու կանգնեցի աւարներից այս ամենը, որը պատ- « կանում է Արգիստիսին, Մենուասի որդուն, որն է կարող Թա- « գաւոր, Հզօր Թագաւոր, Թագաւոր Վանայ երկրին, որը բնակ- « ւում է Տոսպ քաղաքում: —

Վեցերորդ տողի երկու բառը Սէյսը չէ կարողացել վերծանել, այդ Արգիստիսի որդու անունն է, կամ պալատի անունը: Այս արձանագրութիւնը ցոյց է տալիս որ Արգիստիսը տիրել էր Արա- բատեան աշխարհին և իւր որդու համար այնտեղ պալատ շինել կործանուած պալատի կամ քաղաքի տեղը: Նոր արձանագրու- թիւններ, եթէ գտնուին, կարող են շատ բան պարզել: Հրաւի- րում ենք մեր ուսուցիչների, քահանաների, ճեմարանի ուսանող- ների և ամեն ձեռնհաս մարդկանց լուրջ ուշադրութիւնը, որ իրենց ջանքը չխնայեն նոր հետախուզութիւնների համար:

ՄԻԱԲԱՆ.

20 յուլիս (ն. տ.) 1892 թ.

Փ ա Ր ի զ.